

Միեւնոյն միջատի համար մենք երկու բառ ունենք. «մրջիմն» եւ «մրջիւն»: Մրանք միեւնոյն բառի հոլովոյթի տարբեր աստիճաններն են, որ քարացած ձեւով հասել են մեզ: Ժողովուրդն այսօր ասում է «մրջիմ»: Այս բառերից մէկի սեռականն է «մրջման», միւսինը՝ «մրջեան»: Մեր «ձիւն» բառը իր տեսքով նման է «մրջիւն» բառին, իսկ իր սեռականը, որ է «ձեան», նման է «մրջեան» ձեւին: Յետուած այս զուգահեռին՝ կարելի է «ձիւն» բառի համար վերակազմել մի վաղեմի ձեւ իբր «\*ձիմն»:

Այս ձեւի վերջին ծածուկ վանկի մէջ խամբած է մի հին ձայնաւոր. իմ կարծիքով մի վաղեմի ա. որով «\*ձիմն» ձեւը կարելի է վերականգնել իբր «\*ձիմ-ան»: Մա ածանցաւոր կազմութիւն է. իր արմատն է «ձիմ» եւ ածանցը՝ «ան»:

Մենք ստացանք նոյն արմատը, ինչ որ գտանք «ձմեռն» բառի մէջ, որ է «ձիմ»:

Մենք ունենք հիմա «ձիւն» եւ «ձմեռն» բառերի հնագոյն ձեւերը. կարող ենք նրանց զուգադրել, մանր քննութեան եւ համեմատութեան համար.

- \* ձիմ-ան = ձիւն
- \* ձիմ-ի-ար-ան = ձմեռն:

Այս ձեւերից առաջինը նոյն կազմութիւնն ունի, ինչ որ խամ-ան, վաղ-ան եւ այլ բառերը: Ուրեմն «ձիմ-ան» նշանակում է «ձիմ» անող, \* ձիմարար: Իր հոլովոյթի յետագայ փուլն է «ձիւ-ան», ուր մ-ը դարձած է ռ: Այս ձեւի մէջ բառը նշանակում է «ձիւ» անող, \*ձիւարար:

Այստեղ «ձիմ» եւ «ձիւ» նոյնիմաստ են եւ համարժէք: Հնագոյն ձեւն է «ձիմ», ինչպէս ցոյց են տալիս օտար համարժէքները, որ մ ունեն եւ այդ ձեւով յայտնի են Քրիստոսից աւելի քան հազար տարի առաջ: «Չիմ» եւ «ձիւ» արմատների միջեւ աւելի քան 1500 տարի է սահած, քանի որ մեր «ձիւն»ը դասական բառ է:

Այդ տասնուհինգ դարերի ընթացքին է, որ ենթադրածս բայց անգոյ \* «ձիմն» ձեւը դարձած է «ձիւն»: Մօտաւորապէս նոյնքան դարերի ընթացքին դասական «մեծ» բառը դարձած է դաւառական «վենձ»: Որոշածս

ժամանակն ուրեմն բաւական էր «ձիմ»ի մ-ը ռ դարձնելու համար: Այս անդամատուրից երեւաց, որ «ձիւմ-ան.— ձիւ-ան.— ձիւն ներկայ դերբայ է:

Ներկայ դերբայի իմաստ ու ձեւ ունի նաեւ «ձիմ»-ի-ար-ան» վաղեմի բառը: Բայց այս ձեւը կրկնակի դերբայ է: Ինչպէս ունինք կրկնակի յոգնակներ. յօն-ք-եր, կամ-ք-եր. կամ ինչպէս եղած են կրկնակի սեռականներ, օր. նոցունց. այնպէս էլ ունինք հազարաւոր կրկնակի ներկայ դերբայներ: «Չիմ-ի-ար» ձեւն ինքնին ներկայ դերբայ է, որ ամփոփումով տուած է «ձմեր»:

Տեսանք, որ սա մեր մի շարք բարդ բառերի բաղադրիչներից մէկն է. միւսն էր «ձմեռն»: «Չիմ-ի-ար» ձեւի երկրորդ բաղադրիչը՝ «ար», ես համարում եմ «առնել» բայի պարզ արմատը, որի կրկնաւորն է «ար-ար.— արար»: «Առնել» բայը պէտք է վերականգնել իբր «ար-ան-ել»: Մրա շեշտը առաջին վանկին է զարկած, որով երկրորդ վանկի ա-ը սղած է եւ ր-ն մօտենալով ն-ին, դարձած է ռ.— ա'ր-ան-ել.— ա'ր-ըն-ել.— առ-ն-ել: «Ա'ր-ան-ել» բայը կազմուած է ձիւտ այնպէս, ինչպէս «հատ-ան-ել. մեռ-ան-ել. կործ-ան-ել» եւ սրանց նման բայերը: Միայն թէ դեռ եւս նախադրական շրջանում «ար-ան-ել» ձեւն արդէն ամփոփուած էր. միւս երկուսը ամփոփուեցան յետագային, դառնալով՝ «հատ-ն-ել, մեռ-ն-ել». իսկ «կործանել» բայը դեռ շարունակում է տոկալ ժամանակի ծախիչ ուժին եւ մնում է անփոփոխ:

Այսպիսով «ձիմ-ի-ար.— ձմեր» ձեւը նոյն արժէքն ունի ինչ որ «ձիմ-ան» ձեւը եւ հազարաւոր հին բառերի ալ բաղադրիչը նոյնարժէք է ան բաղադրիչին: Ինչպէս «ար» արմատից ունինք «ար-ան-ել.— առնել, այնպէս էլ «ան» ածանցից ունենք ան-ել.— անել: «Անել» բայը գատ ձեւ է եւ ոչ թէ «առնել» բայի մի ձեւափոխութիւնը: «Առնել» բայից է ծագած դաւառական «էնել» բայը, որ լսում ենք ժողովրդական երգի մէջ.

Իմալ էնիմ, իմալ էնիմ,  
 Գեազուկ ձուն ա, շիւարեր իմ.  
 Այդ բայի հոլովոյթի փուլերն են. ա'ր-ան-